

Հին դատաստանի օրուան սպասել չի նը-
շանակեց: Վարդապետութիւնը չափէն ա-
ւելի որոշ է, և ո՞ւ է խնդիր չի վերցներ.
բաւ է յստակ աչք ունենալ: Քաւարան
բառն ալ զինքը շատ կը գայթակղեցնէ և
կը ջղայնացնէ: Սակայն մեր ամենէն ա-
ւելի նուիրական գրքին՝ Շարականին մէջ
գործածուած է այն. տես Ժամակարգու-
թիւն, տպ. վենետ. էջ 333 և էջ 1033,
հմմտ. Հ. Գրք. Աւետիքեան բացարու-
թիւն շարակ. էջ 533: Այդ տեղերուն մէջ
Եկեղեցին՝ քաւարան կոչուած է: Արդ,
ինչպէս եկեղեցին աշխարհիս վրայ մեղքի
քաւարան է, հանդերձելոյն մէջ ալ պա-
տիժներէն ազատելու տեղույն՝ լաւագոյն
է քաւարան ըսել: Հետաքրքրական է նաեւ
խմբագրին պարզած տեսութիւնը, ուր ա-
ռանց անդրադառնալու՝ ինցնիրեն կը հա-
կասէ: «Քրիստոնէական մտածումին մէջ,
կ'ըսէ նա (և ուղիղ կերպով), չի կրնար
երբեք չլինել քաւութեան գաղափարը, զոր
հոգին գերեզմանէն անդին ալ կրնայ ըն-
դունիլ միշտ՝ իրեններուն աղօթքով...»:
Ճիշտ այս է ուղղափառ վարդապետու-
թիւնը: Բայց զարմանալի կը թուի իր
յաւելածը. «այսչափ միայն, ո՞չ աւե-
լի»: Հոգին քաւութիւն գտնելէն վերջ՝
ալ աւելի ինչ պիտի ուզէ. աստուածա-
նալ: Միայն մաքրուիլ, սրբուիլ, սուրբ
ըլլալ. իսկ աւելին՝ աւելորդ է: կը յարէ
դեռ. «Քաւութիւն, ո՞չ քաւարան»:

Մկրտութիւն առնելու տեղույն՝ կ'ըսենք
մկրտարան, վարժութիւն առնելու տեղ-
ույն՝ ամէն հայ՝ կ'ըսէ վարժարան. արդ
քաւութիւն առնելու տեղույն կամ վիճա-
կին, Հրամանքնիդ ինչ պիտի ըսէք, Տէր
խմբագիր...: ինչ անուն կ'ուզէք դրէք.
հարցը քաւութիւն գտնելու սկզբունքին
վրայ է, որուն ուրախ եմ որ Դուք չէք
հակառակիր: Բայց լաւ կ'ըլլար աստուա-
ծարանին հետ՝ հայկարանին ճաշակն ալ
գոհացնել:

Պարսաւած էի և դարձեալ կը պարսա-
ւեմ հաւաքական խոստովանանքի չարա-
չար կիրառութիւնը, որ ծոյլ և անհոգ
պաշտօնէից մեղաղրելի գիւտն է, և բայ-
արձակապէս խորհրդի արժէք չունի: Մեղ-
քը, Աստուծոյ հանդէպ տեսակ մը պարտք
է: Արդ քահանայն, Աստուծոյ կողմանէ
դատաւոր կարգուած, հարկ է գիտնայ
իւրաքանչիւրին պարտուց ծանրութիւնը՝
և ըստ այնմ իր վճիռն արձակէ: Հաւա-
քական ձեւին մէջ քան մը չի կրնար հաս-
կընալ: Եւ, միթէ այդ 12 – 14 – 15
տարեկան տղաքը մեղք չունին, կամ յան-
ցանքնին հաւասար է, և խղճի նոյն խայթը
կը կրեն:

Կ'առարկէ ինձ քահանայից առանձնա-
կան խոստովանութիւնը, որուն ես վա-
ղուց քաջածանօթ էի, եւ անոր համար
հակառակ բան մը չէի զրած: Բայց չը-
մոռնայ որ այդ խորհուրդը միայն քահա-
նայից ի նպաստ հաստատուած չէ:

Ի հարկին աւագերէցը կը տնօրինէ ե-
ղեր: Ուր որ իրապէս հարկ կայ, այն
րուծանէ զօրենս և աւագերիցու տնօրինման
պէտք չկայ: Այդ հարկը սակայն շատ
հազուադէպ է. նաւարեկութեան կամ հըր-
դեկի ատեն, կարելի է՝ նոյնիսկ քիչ մը
հեռուէն, արձակել ամրողջ բազմութիւնը:
Բայց աւագերէցի կամ խոստովանահօր
ձանձրութիւնն ու գործերը, կամ տղոց
բազմութիւնն ու հասակը, ամենեւին պատ-
ճառ չեն որ հաւաքական արձակում մը
տրուի, որով Ս. Խորհուրդը կ'ոչնչացուի:

Ի վերջոյ կը մեղաղրէ զիս Արգոյ խըմ-
բագիրը՝ Հայաստանեայս եկեղեցւոյն
«Հաղորդութեան Ս. Խորհուրդն անվաւեր
և դատապարտելի» կոչած ըլլալուս: Ես.
քաւ, մի լիցի: Այսպիսի բան ըսած չեմ
երբեք և ըսելիք ալ չունիմ: կը յանձնա-
րաբեմ որ յօդուածս վերստին կարդայ,
թէ որ չ'ուզեր իմ և ամէն մարդու կող-
մանէ կոչուիլ ԽԵՂԱԹԻՒԹԻԶ:

Հ. Գրիգոր Սարտսս

ԲՈՒԱՐԵԱՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պրն. Հ. Աճառեանի «Հայերէն արմա-
տական բառարան» հոյակապ գործին
արժանի գրախօսական մ'ըրած է Հ. Ն.
Ակինեան վրդ. «Հանդէս Ամսօրեա» մէջ
(1930, Յուլիս – Օգոստ. էջ 482):
Յետ դրուատելու գործին մեծութիւնը,
թափուած անչափ աշխատանքը, պարու-
նակած լեզուական գանձը, յարգելի Հայ-
րը ըննադատի անաշառութեամբ կը ջա-
նայ ցոյց տալ ինչ ինչ թերութիւններ որ
սպազմակած են այդ գործին մէջ. և այդ հա-
սպազմակած կ'ունենայ անշուշտ շնոր-
հիւ իր բազմակողմանի հմտութեան:

Ոչ նուազ հմտութիւն կը ցուցնէ նաեւ
հակառակ որ մասնագէտ կամ յատկա-
պէս նուիրուող մը չէ այս ճիւղին – բու-
սաբառական դիտողութիւններու մէջ. սա-
կայն այնպիսի կնճոտ հարցերուն և լը-
կայը զիս ինչ ինչ թիւրիմացութիւններ.
դանձրութիւնն ու գործերը, կամ տղոց
բուսաբառական խնդիրները, զարմանալի
չէ եթէ յարգելի Հօր կարծիքներուն եւ
պատուած մեկնութիւններուն մէջն ալ սպըր-
դած ըլլան ինչ ինչ թիւրիմացութիւններ.
և յարգ. բանասէր Հայրը անշուշտ պիտի
և ներէ որ մենք ալ մեր կարծիքները կամ
դիտողութիւններն աւելցնենք իր տուած
այս քանի մը մեկնութիւններու մասին:

Այս շփոթութեան բացարութիւն մը
կարենալ տալու համար, ուղղակի աղ-
բիւրին՝ Գաղիանոսի բառերուն դիմելու
ենք:

Գաղիանոս կը զբէ. 1. «Եւզումն. Ա-
ստրեակ» — 2. «Կարդամուն(ն). Աստրեակ
կամ Կուտիւնն»:

Առաջին վկայութեան մէջ ոչ մէկ գի-
տելիք կայ, քանի որ Եւզումն (լատին:
eruca) և Աստրեակ (լատիներէն երսա)՝
ուղղակի իրարու հոմանիշ բառեր են: Բայց
երկրորդին մէջ սիսալը շատ յայտնի է,
համազգի կը ներկայացուի կոտեմիթի:

1. Կախորդ մասը տես Բզմէպ. 1931, էջ 140.

որովհետեւ կարդամումոն, ինչպէս տեսանց,
Համեմազգի բոյս մ'ըլլալով՝ ոչ միայն հո-
մանիշ չէ Ասորեսակ (լատ. eruca և կամ
nasturtium)՝ և կոտիմն (լատ. carda-
mina) երկու խաչարեր բոյսերու, այլ և
ոչ համազգի է:

Ուրեմն շփոթութիւնը կամ սխալը կարդամունքն բառին մէջն է. սխալ մը որ մեր կարծիքով կարելի է ուղղել, եթէ փոքրիկ կրծատումով մը զայն կարդանք կարդամունք կամ կարդամին ²:

Կարդամոն [= յն. քարծամօն, լատ. *nasturtium*, գր. *cresson*] կը նշանակէ Ջրկոտիմե, ԱՍՈՐԻՆԱՅՑ
Կարդամին [= յն. քարծամին, քարծամին, լատ. *cardamina*, գր. *cardamine*, *cresson alénois*] կը նշանակէ ԽՈՏԻՄԵ

՞ Ուստի այս երկու բառերէն (կարդամոն կամ կարդամին) մին կամ միւսը զնելով Գաղիանոսի կարդամոմոն սխալ բառին տեղ՝ «Ասորեակ կամ կոտիմ» բառերն արդէն իրենց հոմանիշը կամ գէթ համազգին կը գտնեն»:

Մեր կատարած այս սրբազրութիւնը իր վաւերականութեան փաստը կը ստանայ Հին բժշկաբանին սա համառօտ բայց յայտնի վկայութենէն որ կ'ըսէ «կառտամա կոտիմն» :

Այս կառտաման արք. կոտիմն նշանակող և աճարէ (գարտամա) բառն է, որ ծագումն առած է յուն. Կարծամից, Կարծամնուն (տ. Dict. Richardson), որոնց հոմանիշը կը նշանակուի կոտիմն բառը Հին թժկարանի մէջ. ուսկից կը հետեւի թէ Գաղղիանոսի մէջն ալ միենոյն կոտիմնի հոմանիշը յուն. Նոյն Կարծամոն, Կարծամնուն բառերն ըլլալու են և ո՞չ թէ Կարծամամոն բառու:

Այս սրբագրութենէն կը հետեւի որ Աստղեակի ձշցրիտ իմաստը տուող յուն. բառերն են Ենչամօն (լատ. *erucac*) և Կարծամինդ (լատ. *nasturtium*). հետեւանց մը որուն յանգած պիտի ըլլար նաեւ չ. Ակինեան, վրդ. եթէ անդրադարձած եւ ուղղած ըլլար Գաղղիանոսի սխալը : Մինչդեռ Հայրուսակը կանուեին անդրադարձեր. է և ոճով մը որ իրեն յատուկ է, համառօտիւ՝ սրբագրած է Գաղղիանոսի սխալ բառը, անոր քովը դնելով լատին.

ուղիղ բառը, այսպէս. «Կարդամոմոյ» (CAR-DAMINA) Ասորեակ կամ կոտիմն » (Տես Հյորուսակ § 168, էջ 50):

Բ. — «Թարգմանութիւն դեղոց» ունի
«Ջրջիր. Ասորեկ» : Հ. Ակինեան այս բա-
ռին վրայ խօսելով կ'ըսէ «Ջրջիր և պարս.
Ջիրջիր, զոր Գէորգ Պայիր կը մեկնէ վայրի
և անանեխ. խարտավի պէրրի » : Որմէ կը
հետեւի թէ՝ յարգ. Հօր կարծիքին համե-
մատ թարգման. դեղոց «Ասորեկ» բառով
կամ վայրի մանանեխ իմանալու է և կամ

՞նջելու է զայն իրը անճիշտ։
Սակայն երկու ենթադրութիւններն ալ
սխալ են. վասն զի տեսանց արդէն թէ
լսորեկ՝ լատ. eruca և կամ *nasturtium*
լը նշանակէ եւ ոչ թէ *Sinapis silve-*
stris (= վայրի մանանեխ)։

Յարգ. բանասէր Հայրը յիշելու էր «
զարս. և արար. լեզուներու մէջ Զիրչիր
կամ Ճիրճիր անուամք մէկէ աւելի բոյսեր
կան: Պարս.ի մէջ կայ ՐՋՐՋ (= Զիրչիր)
որ ինչպէս ինքը գրած է «Վայրի մա-
նանեխ» կը նշանակէ. նոյն լեզուին մէջ
ունինք դարձեալ ՐՋՐՋ (= Ճիրճիր) որ
աւելայ կը նշանակէ: Գէորգ դպիր յիշած
է երկուքն ալ: Աւակայն ասոնցմէ զատ
առօ.ի մէջ կայ նաեւ ՐՋՐՋ (= Ճիրճիր)

143. Ասորեսակ քառը, ինչպէս յետոյ պիտի տեսնենց,
որկու նշանակութիւն ունի. 1. լատ. eruca, զգ. go-
nette. 2. nasturtium, զգ. cresson.

2. Ի և Ո տառերու շփոթութիւնը շատ սովորական
գերազանց մէջ:

4. Նոյնիսկ հաւանական է որ Գաղղիանոսի նախնական հայերքն թարգմանութեան մէջ վերոյիշեալ յուն. առաերն երկուը միանգամայն զրուած ըլլան, սապէս՝ կարդամոն, կարդամին. Ասորեակ կամ կոտիթ» և կատոյ յաջորդ ընդօրինակողներէն՝ կամ տղիտութեամբ չափոյ յաջորդ ընդօրինակողներէն՝ պատուած է այդ բառերէն մին՝ իրք աւելորդ կրկնութիւն, կամ շփոթութեամբ երկու բառերն ի մի կաղապար- տելով՝ եղած է կարդամոմին, և ապա Գաղղիանոսի բա- ռերուն մէջ դեռ մնացած այդ «կարմոմու», «կարդամո- մու» և այլն ձեւերը, որով ինդրառու բառը բոլորովին առարկեր իմաստ առած է:

որ կը նշանակէ անգղ. Rocket, (*Sbu*
Dict. G. Percy Badger) և լտ. Eruga¹
որ է ճիշտ մեր փնտռած «Ասրեկ»:

Հետեւարար թարգման. դեղոց «Զքջիր»
Ասորեկ»ը ոչ թէ. պարս. այլ արար. ՀՀՀ
(= Ճիրճիր) բառն է, որով պէտք չունի
սրբագրութեան:

Նոյն արար. յշխ բառն է զոր Աստր
բժիշկ Գարջիր կը կարդայ. «Քիզիզ [իմա
Քիքիզ՝ պարս. = կենչ, լատ. eruca] Գար-
ջիր. կարմիր հոնդ » (Տես Հայրուսակ
§ 3193) և Ամիրտովլաթ Ճարճիր, Ճեր-
ճիր կը կարդայ, «Ճարճիր ինքն հոնես և
կարմիր» (Հայրուս. § 1865) «Ճարճիր որ է
Ասորեկն. որ է ջրկոտիմն», (Բժշկ. թ. 35)
«Ջրկոտիմն որ է Ճերճիրն, որ է սու թէրէ-
սին», Ամիրտ. Անգիտ. անպէտ. § 1936.
հմմտ. և 2890 (Հրատր. Բասմաշեան):

Գ.— Մեծարգոյ բանասէր Հայրը Դրս-
նուելով իրենց Մատենադարանի թ. 892
թժկարանի վկայութեան վրայ՝ կը շա-
րունակէ. « Ասորեակ եւ Ասորեկ ունին
նաեւ Սորեակ եւ Սորեկ համառօտուած
ձեւերը » :

Այս կարծիքը սխալ կը համարիսկ՝
հակառակ տեսնելով զայն թէ նախնեաց
և թէ գաւառացւոց ու արդի հեղինակնե-
րու վկայութեանց ։ Նախ ըսենց որ Ս.
Ղազարու մեր Մատենադարանին բոլոր
բժշկաբաններու մէջէն միմիայն թ. 491
թժկարաններու մէջէն միմիայն թ.

Հայկազեան բառարանը նախ Առաջ Հայկազեան բառարանը նախ Առաջ
բառակին քով փակազգի մէջ զնելով Սո-
ւեկը՝ արդէն կ'ուզէ ցոյց տալ թէ ան-
հաւանական է կամ սիւալ՝ Սորենի բառը
Ասորեսկին ուրիշ մէկ ձեւը համարիլլը։ Եւ
այս այնքան ստոյգ է որ, երբ այլուր
առիթ կ'ունենայ խօսելու Սորենին վրայ,
կ'ըսէ «Սորենակ կամ Սորենի. Ունդ նման

կորեկան. թ. գուրիմ՝ ՇՓՈԹԻ ՅՈՄԱՆՑ
ԵՒ ԸՆԴ ԲԱՆՁԱՐՆ ԱՍՈՐԵԱԿ »⁵: Յայտնի
է ուրեմն թէ Հայկազեան — որուն ծա-
նօթ է ձեռազբական Սորեկ սխալ ձեւը —
չ'ընդունիր Սորեակ կամ Սորեկ իրը Ա-
սորեակ բանջարին համառոտած մէկ
ձեւը:

Մենց ալ ուրիշ առիթով փաստած ենք
թէ Սորեկ՝ ըստ վկայութեան գաւառացւոց
և արդի հեղինակաւոր անձանց՝ արմտիք
մ'կ. և թերեւս հայացած ձեւը լտ. Sor-
ghum բառի : Հմմտ . ստորին լտ. Sor-
gum, Surcum, Suricum. իտ. Sorgo
= Սըրեկ, Սորոկ, Սորուկ, Սորըզ, Սո-
րիկ՝ (որուն մէկ տեսակն է, տան անելը
= լտա. Sorghum vulg. Pers. կամ
Holcus sorghum L.) : իսկ Ասորեակը՝
նախնեաց բժշկաբաններուն համեմատ՝ լտ.
eruca բանարն է, թ. ոօսաս սաւաթա :

Այսքանն արդէն բաւական էր հերթե-
լու յարգ. Հօր կարծիքը. սակայն որպէս
զի վերոյիշեալ երկու Բժշկարաններէն
(Վիեննական թ. 892 և Ս. Ղազարու թ.
491) ծագելիք թեթեւ տարակոյսն ալ բո-
լորովին փարատենք, հոս յառաջ կը բե-
րենք մեր Մատենադարանին բոլոր Բժշկ-
կարաններուն (Գաղիանոս, Թարգ. դեղ.)
վկայութիւնը, նկատել տալով որ ասոնցմէ
ոմանց գրչութեան թուականը կը բար-
ձրանայ մինչեւ 1282:

4. «Ասորեսակ կամ Ասորեկ ... (զբի և Առեկ) բան»
Ցայտ էծու և Համեմատու»:

5. Σωρτικόνης, Φ. Καστ. «Θωρικούαδ. αγήμαρεική παπορ», ξ9 1067:

6. Բազմավէպ, 1981, Մարտ, էջ 140.
 7. Տես «Հայոց բառ ու բան», Ա. մոռ. Ամառունի.

և «Գաւառ բան ու բան», Յ. Վ. Պ. Յ. Ա. Ա. Կ. և «Գաւառ կան բառարան» Հ. Աճառեան:

ՎԵՆՔԻՍ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՅՍՊԻ-Ա ԿԸ ԳՐԵՆ

- | | | |
|--|--------------------------|---------------------------|
| «Կարդամոմո» . . . | Ասորեակ կամ կոտիմ» . . . | Գաղ. ¹ |
| «Կարդամոմոյ» . . . | Ասորեակ կամ կոտիմ» . . . | Գաղ. թ. 662 |
| «Կարդամոմոյ» . . . | Ասորեակ կամ կոտիմ» . . . | Գաղ. թ. 1490 |
| «Կարդամոմու» . . . | Ասորեակ» | Գաղ. թ. 1244 ² |
| «Եւզոմոն» . . . | Ասորեակ» | Գաղ. Փարիզեան օր. |
| «Եւզոմոն» . . . | Ասորեակ» | Գաղ. Փարիզեան այլ օր. |
| «Եւզոմոն» . . . | Ասորեակ» | Գաղ. թ. 39 |
| «Եւզոմոն» . . . | Ասորեակ» | Գաղ. թ. 344 |
| «Եւզոմոն» . . . | Ասորեակ» | Գաղ. թ. 1490 |
| «Եւզոմոն» . . . | Ասորեակ» | Գաղ. թ. 1244 |
| «Ջըմիր Ասորեակ» Թարգման. դեղ. թ. 1244 և 491 | | |
| «Ճարճիր որ է Ասորեակն որ է Ջըմոտիմ» Բժշկ. թ. 35 | | |
| «Ասորեակ որ է Ղուրախթ ըլ այն» Ոմիրտ.ի «Անզիտաց անպէտ» | | |
| «Ասորեակն տաք է... որ ուտէ զլուխն ցաւի» Հին Բժշկ. թ. 1281 ³ | | |

Արդ այս մեր բոլոր բժշկաբաններու համաձայն վկայութենէն կը հետեւի կրկին անգամ թէ վերի թ. 892 և թ. 491 սխաղագիր բժշկաբաններուն մէջ եղած «Սուրբակ» «Սորեկ» ձեւերը պարզապէս պատահական սխալներ են. և թէ մեր նախնաց համեմատ Ասորեակ կամ Ասորեկ բառը բնաւ ուրիշ համառօտ ձեւ չէ ունեցած:

Ամփոփելով բժշկաբաններու վկայութիւնը, մեր տուած բացատրութիւններով հանդեպ՝ կը նանք կազմել հետեւեալ ցանկը.

- | | |
|---|---|
| «Կարտամա. [= արք. قاردا م = jն. հարծաբինդ, լատ. Cardamina] | կոսիմն » (Հեն բժշկ.) |
| «Կարդամումն» [իմա' { կարդամն. = jն. հարծաբայոն, լատ. Nasturtium
կարդամին. = jն. հարծաբինդ, լատ. Cardamina] | Ասորեակ { (Գաղղիանոս)
կոսիմն » (Գաղղիանոս) |
| «Եզզումն. [= jն. ընջամօն, լատ. Eruca] | Ասորեկ » (Գաղղիանոս) |
| «Ջրիր. [= արք. جریر, լատ. Eruca] | Ասորեակ » (Թարգ. դեղ.) |
| «Ճարճիր. [= արք. جریر, լատ. Eruca] | որ է Ասորեկ, որ է Ջրկոսիմն » Ամիրտ. |
| «Ճարճիր. [= արք. جریر, լատ. Eruca] | որ է Ասորեկ, Ջրկոսիմն » (Ամիրտ.) |

որմէ յայտնի կը տեսնուի թէ լատ. Cardaminaի (գդ. Cardamine, Cresson alénois) հոմանիշը կոտիմն է. իսկ ասոր համազգի Ասորնակ կամ Ասորնկը երկու նշանակութիւն ունի, 1. լատ. Eruca (գդ. Roquette) և 2. լատ. Nasturtium (գդ. Cresson) = ջրկոտիմն, ինչպէս արդէն ուղիղ կերպով նշանակած են թէ Հայրուս. § 168 և թէ Աճառեան (Որմատ. բորն. հա. Ա. էջ 544) զորս թերի կը գտնէր Հ. Ակինեան վրդ.:

Արք կարծիքին համեմատ Արքարգոյ Հօր շփոթութեան պատճառ եղած են այս
նմանաձայն բառերը զորս տեսանք, այսինքն

Յուն. *Καρδάμωμον* (գղ. cardamome) և *Κάρδαմոν* (գղ. cardamine, cresson alénois)
Հայ. *Ազդրեսի* (ըստ 1. roquette 2. cresson) և *Առկեսի* (արմամիք մլր. գղ. sorgho)

Il agu: $\text{ag} \text{gu}$ (*agu*: roquette) / **Il amu**: $\text{am} \text{mu}$ (*amu*: séneyé sauvage);

بِسْرَجَيْرُ (B.S.R.)

5. II: ԹԵՐԱՀԵԱՆ

ՊՐԻՎԱՏ ԹԱՏՐՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ԱԿՁԲԻՑ ՄԻՆՉԵՒ 70 - ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ)

ՊԱՏՄԱ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Կար. տես Բազմավէպ 1934, էջ 21)

Արեւ ձեռքի տակ ունինք պատմական
մի այլ պիէս, որը թէեւ սերտ առընչու-
թիւն չունի ոուսահայ թատրոնի պատմու-
թեան հետ, սակայն հայ թատերական
գրականութեան սկզբնաւորութիւնը լուսա-
բանելու տեսակէտից բանում է մի նոր էջ:

Դա «ԽՏՐԱԴԻՄԱՅ» ԳԺՐՈՂՈՒԹՅԵՆ» խորագրով, չորս գործողութիւնից բաղկացած, կատակերգութիւնն է, որ լոյս է տեսել 1821 թ. հոկտեմբեր 1-ին Կալկաթայում, Յորդանանեան Պօղոսի Յ. Տէր - Յակոբեանի տպարանում:

ինչում է կայանում հարիւր տպագրա-
կան էջից բաղկացած այդ պիեսի նշանա-
կութիւնը:

Երկու տեսակէտից պիէսն արժանիք է
ուշաղը թեան։ Առաջին և հիմնական ե-
րեւոյթը պիէսի պատմական արժէքն է։
Մինչեւ օրս յայտնագործւած պիէսների
մէջ դա ամենահինն է, զրւած է մեզանից
հարիր տասնեւերկու տարի առաջ։ Այդ
տեսակէտից էլ պիէսն ունի պատմական
նշանակութիւն եւ արժանի է առանձին
ուսումնասիրութեան։ Երկրորդ ուշագրաւ-
գիծը պիէսի բովանդակութիւնն է։ Ոյն-
տեղ ձեր աչքերի առաջ պատկերանում է
մեզանից մի դար առաջ զյութիւն ունե-
ցող հնդկահայ մեշշանական լնտանիքի
վարք ու բարքը, կենցազը։ Ծանօթանում
էք դուք այդ ընտանիքում ապրող կնոջ,
օրինութիւն և երիտասարդիների բացասական

զծերի հետ։ Այս ձեզ այդ ընտանիքի մօք պատկերը, նրա բնաւորութեան առանձնայառուկ գծերը, նոգեբանութիւնը.

«Ես իմ աղջկան ողջ էլ սիրում ան,
Մընն ինձ սիրող՝ խօյ չե զուս գուման,
Սիրոց ափսո՞ն՝ որ շատ պստիկ այ,
Վախման, ամ խարվի՝ խեղճն ապագայ,
իմ թշնամիքն խելքում կրերեն,
Կասեն շատ մեծ ամ, խելքից կիսանեն,
Մարկոսն ինձ սիրէր շատ լէվ բան կլինէր,
Փոքր պստիկ այ, ամանչելէց չէր,
Աղջկան բաղդ ունի՛, որ ողջ էլ սիրեն,
Ես շատ բամբազդ ամ, որ ինձ սիրում չեն,
Մարկոսն և Գօն Ժուանն շատ լէվ անձինց
Ափսո՞ն որ սորա այժմս զառակ ան,
Են որ բարին այ, Տէրն առաջնորդի՛,
ինձ համար սիրող մինն պատրաստի»:

Թէ ովէ է պիէսի հեղինակը , յայտնի
չէ : Շապիկի ճակատին կարդում ենք հե-
տեւեալը . «Աշխատասիրեալ որութեալ մատադ-
րանաստեղծի» : Եւ մատադ բանաստեղծը
համեստութիւնից զրդւած թագցրել է իր
խակական անունը : Որ այդ համեստ բա-
նաստեղծը Նոր - Զուղայեցի է , միանգա-
մայն բացայայտ է : Այդ հանգամանըը
կարելի է հաստատել հէնց նրանով , որ
պիէսը զրւած է Նոր - Զուղայի բարբառով ,
զրաբարախառն և չափածոյ : Ո՞վ է սա-
կայն Նոր - Զուղայեցի այդ թատերագիրը :
Ժամանակաշրջանի հնդկահայ բանաստեղ-
ծական զրականութեան պատմութեան մէջ
փայլում են երեք յայտնի զրականագէտ-

1. $\Phi^{w\rho} b q h w u$ $\| qq$. $\mathbf{U}^{w\bar{n}q \rho \bar{u}}$, Suppl. 43 (1282) $b_{\bar{u}} q_{\mu \nu \tau} w \delta$) $q \mu \xi^w q \mu \bar{b}^{\bar{u}}$ $o p \bar{b}^{\bar{u}} w \bar{b} \nu \tau \bar{b}^{\bar{u}} \bar{b}^{\bar{u}}$:

2. Գրուած 1307ին: - 3. Գրուած 1294ին: